

## **Տեղեկատվություն**

### **«Դիլիջան» ԱՊ » ՊՈԱԿ-ի 2015թ-ի հունիս ամսին կատարված աշխատանքները**

2015թ-ի Աշխատանքային պլան-ծրագրով նախատեսված աշխատանքներից «Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի բաժիններում հունիս ամսում կատարվել են հետևյալ աշխատանքները.

- Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից հաշվառվել և կնքվել են հունիսի 9-ին ուժեղ քամիների հետևանքով առաջացած քամատապալ ծառերը, կազմվել են հաշվեգնահատման ցուցակներ և ուղարկվել ՀՀ բնապահպանության նախարարություն:
- Հայտնաբերվել է ապօրինի հատված 54 ծառ, որոնց համար կազմվել է 6 անտառխախտման արձանագրություն, որոնք ուղարկվել են ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին՝ ընթացք տալու:
- ՀՀ բնապահպանության նախարարություն է ուղարկվել 2015թ.-ի գարնանային հերթական ստուգումների արդյունքների ամփոփ-հաշվետվությունը:
- Պահպանության բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել է հակահրդեհային ճանապարհների կառուցում՝ 1,5 կմ, վերանորոգում՝ 4 կմ, ջրավազանի կառուցում՝ 1 հատ, վերանորոգում՝ 3 հատ, ինչպես նաև ագրոտեխնիկական խնամք՝ 11 հա:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են՝

- Հերբարիումների պատրաստման համար նախապատրաստական աշխատանքներ,
- «Դիլիջան» ազգային պարկի էկոհամակարգերի վրա ազդող գործոնների ուսումնասիրում,
- Վայրի պտուղների և հիմնական ծառատեսակների (հաճարենի, կաղնի, բոխի) ֆենոլոգիայի ուսումնասիրում: Քարտադարանի լրացում:
- Ազգային պարկի տարածքում տարբեր բուսատեսակների ուսումնասիրում՝ «Լորենի» ծառատեսակի ուսումնասիրում:

<<Մասրենի>> թփատոսակի ուսումնասիրում:

<<Գետնամորու >> ուսումնասիրում:

<<Առյուծագի >> բուսատեսակի ուսումնասիրում

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի աշխատակիցների կողմից իրկանացվել են տեղեկատվական ցուցանակների թարմացման, էկոերթուղիների կողմնորոշիչ սլաքների տեղադրման աշխատանքները, կիրառության մեջ են դրվել էկոտուրիզմի ծառայությունների մատուցման սակագները :

Անց են կացվել մրցույթներ՝ կազմակերպության կարիքների համար օգտագործվող բենզինի ձեռքբերման և կազմակերպության ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման համար:

Կազմակերպության աշխատակիցները մասնակցել են հունիսի 5-ին ՀՀ բնապահպանության կողմից անցկացված՝ Բնապահպանության օրվան նվիրված միջոցառմանը: